Հաստատում եմ

տնօրեն՝ Խ.Նավասարդյան

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N5 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի IX դասարանի դասղեկի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքի պլանավորում

Դասղեկ՝ Մարիետա Աբովյան

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)։IX դասարանում սովորում է 4 աշակերտ՝ 4 տղա։Միասնական,կազմակերպված կոլեկտիվ է։Դասարանում տիրում է համերաշխ և առողջ մթնոլորտ։

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

Դաստիարակության սկզբունքների համակարգը ընդգրկում է նրա նպատակաուղղվածությունը, կապը կյանքի պրակտիկայի հետ, դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցումը, աշակերտի անձի նկատմամբ հարգանքի զուգակցումը։

Անհրաժեշտ է կարևորել մարդու մեջ դրականի վրա հենվելու սկզբունքը.այս սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր աշակերտի մեջ նկատվի ամենից ուժեղ կողմը.հասնել նրան,որ կենսունակը իր իրականացումն ու զարգացումը ստանա գործունեության մեջ։

Անհրաժեշտ է հետևողական լինել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը։ Ուշադրություն դարձնել աշակերտական կոլեկտիվի կազմավորման և համալրման վրա։ Դաստիարակել հարգալից վերաբերմունք մեծերի և փոքրերի նկատմամբ, ծնողների և ուսուցիչների հանդեպ։ Հրավիրել ծնողական ժողովներ՝ որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը։Դաստիարակել հայրենասիրություն, զարգացնել հետաքրքրություն սպորտի և առողջ ապրելակերպի նկատմամբ։

3. Հայեցի դաստիարակություն

3.1 **Հոգևոր դաստիարակություն** Հոգևոր դաստիարակության նպատակն է աշակերտների մեջ սեր և հարգանք սերմանել կյանքի հոգևոր արժեքների նկատմամբ, որ կարողանան սահմանազատել հոգևոր և նյութական արժեքները։Էքսկուրսիաներ կատարել դեպի մոտակա եկեղեցիները՝ մասնակցել պատարագներին և ժամերգություններին։

3.2 **Գեղագիտական դաստիարակություն**
Աշակերտների մոտ ձևավորել ճաշակ, մշակել գեղեցիկը , լավը տեսնելու և զգալու ունակություններ։ Հետաքրքրություն և սեր արթնացնել նկարչության, երաժշտության, արվեստի հանդեպ։Ձևավորել գեղագիտական ճաշակ։Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակների համատեղ գործունեության գործընթացն է՝ ուղղված դպրոցականների գեղագիտական կուլտուրայի ձևավորմանը։

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը

Ռազմա-հայրենասիրական դաստիարակության միջոցով պետք է սեր ու հարգանք սերմանել մեր հայրենիքի և մեր զորավորն հերոսների նկատմամբ,նրա սահմանները ամուր պաշտպանելու նկատմամբ։ Հայրենասիրական երկերը կարող են դրական անդրադառնալ աշակերտի մոտ ռազմահայրենասիրականդաստիարակության վրա։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը հանդիսանում է դաստիարակության կարևորագույն բաղադրամաս և մեծ նշանակություն ունի անձի համակողմանի ու ներդաշնակզարգացման համար։Ֆիզիկական դաստիարակության բազմաբնույթ խնդիրները իրականացնելիս պետք է հաշվի առնել աշակերտի տարիքային առանձնահատկությունները։Բացատրել ֆիզիկական դաստիարակության դերի և նշանակության մասին։բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզիկական պատրաստվածությանը։Հոգ տանել երեխաների ֆիզիկական ակտիվության և զարգացվածության մասին։

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը նպաստում է աճող սերնդի ճիշտ զարգացման հիմնախնդրի լուծմանը։Աշխատանքային դաստիարակության նպատակները բազմազան են,ուստի և պետք է յուրաքանչյուր երեխայի ցուցաբերել անհատական մոտեցում։Պետք է նրանց մոտ զարգացնել սեր ու հարգանք դեպի աշխատանքը։ Արժևորել տարբեր մասնագիտությունների կարևորությունն ու անհրաժոշտությունը։

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Մարդկային քաղաքականության պատմությունը թևակոխել է մի այնպիսի ժամանակաշրջան,որի կարևորագույն և բնորոշ դրսևորումներից մեկը ահագնացող գլոբալ տեխնածին գործընթացներն են,ուստի և հարցը շատ կարևոր է։Ուստի անհրաժեշտ է կատարել էքսկուրսիաներ,տեղում ծանոթանալ հիմնախնդիրներին և լուծումներ փնտրել։

4.Դպրոց-ընտանիք կապը

Կարևորագույն հիմնախնդիր է դպրոց-ընտանիք կապի մշտապեսպահպանումը, քանզի մեկն առանց մյուսի չի կարող լիարժեք դրսևորվել, դրանք լրացնում են միմյանց և երկուստեք գործելուդեպքում արդյունքն ակնհայտ կլինի։Ուստի անհրաժեշտ է դասարանում ունենալ ծնողկոմիտե։ Ուսումնական տարվա ընթացքում պահպանել ուսուցիչ- ծնող կապը։ Համագործակցել ծնողների հետ և հետևել աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքներին։

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնակա շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1.	Գիտելիքի օր։.Կազմակերպչական հարցեր	I շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
2.	<<Բոլորը մեկի համար, մեկը՝ բոլորի>>։ Ստեղծել առողջ կոլեկտիվ	II շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
3.	Ինչ է ազատությունը։<<Իմ հայրենիքը իմ տունն է>> ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված քննարկում	III շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
4.	<<Աշխատանքը ազնվացնում է մարդուն>>։ Աշխատանքային դաստիարակություն	IV շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
5.	Կյանքի մնայուն արժեքները	V շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
6.	<<Ուսուցիչ, որին շնորհակալ եմ այն բանի համար, որ. . . >> (քննարկում)	VI շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
7.	Իմ օրագրի ուրախ և տխուր օրերը	VII շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
8.	<<Ասա ով է ընկերդ, ասեմ ով ես դու>>։ Ինչպես լինել լավ ընկերներ	VIII շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
9.	Վատ սովորությունների հետևանքները։ Ինչպե՞ս պայքարել վատ սովորությունների դեմ	IX շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
10.	Ինչ է կարծրատիպը	X շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
11.	Հեռուստահաղորդումների օգտակարությունը և վնասակարությունը	XI շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
12.	Ահաբեկչությունը որպես մարդկության չարիք	XII շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
13.	<<Հայաստան ուզում եմ քեզ հայտնել իմ սերը>>։ Ինչով կարելի է հպարտանալ, խոսելով Հայաստանի մասին	XIII շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ
14	Արտակարգ իրավիճակը հաղթահարելու պատրաստվածություն	XIV շաբաթ	Դասղեկ,աշ ակերտներ

15	Ամանորին ընդառաջ, զարդարել դասարանը	XV շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
16	<<Իմ կատարած աշխատանքները>>: Առաջին կիսամյակում կատարված աշխատանքների ամփոփում	XVI շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
17	Ինչով է տարբերվում հայը մյուս ազգերից: Քննարկում	XVII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
18	Ազգային և միջազգային տոներ: Հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները	XVIII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
19	<<Բարեկամներ և թշնամիներ>>	XIX շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
20	<Եթե ես լինեի. . . >> քննարկում, նպատակն է վերհանել կարողություններ և հմտություններ	XX շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
21	Զրույց <<Եթե երեխան վատ շրջապատ է ընկել>>	XXI շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
22	Վարվեցողության կանոններ: Քննարկում	XXII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
23	Հայտնի մարդկանց կյանքի պատմությունը	XIII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
24	<<Դռները բացեք գարուն է գալիս>>: Իմ սիրած տարվա եղանակը քննարկում	XXIV շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
25	Իմ սպորտային հաջողությունները	XXV շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
26	Միմյանց օգնենք հաղթահարել դժվարությունները	XXVI շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
27	Ժամանակակից հաղորդակցության տեխնիկական միջոցներից օգտվելու կարողությունները: Ով ինչքանով է ծանոթ դրանց	XXVII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
28	Գիրքը իմ լավագույն բարեկամն է	XXVIII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
29	Հայաստանի պետական խորհրդանիշները: Քննարկում	XXIX շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
30	Ին՞չ ֆիլմեր եմ սիրում դիտել	XXX շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
31	Խոսքի կուլտուրան, խոսքի հզորությունը	XXXI շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
32	Զրույց՝ «Հանուն առողջ ապրելակերպի» թեմայով	XXXII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
33	Ինչ է ինձ համար դպրոցը	XXXIII շաբաթ	Դասղեկ,աշակերտներ
34	Ինչպես անցավ 2023-2024 ուս. տարին: Տարվա ընթացքում կատարած աշխատանքների ամփոփում	XXXIV շաբաթ	Դասղեկ,աշակերտներ

Digitally signed by NAVASARDYAN KHAZHAKN 1905610114
Date: 2023.09.26 13:11:10 AMT